## ԼԵՈՅԻ «ՎԷ՞Պ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ Շուշի, 1887 թուական...

1886թ. Ս. Պետերբուրգում Ապրես Բեկնազարյանի հեղինակությամբ լույս տեսած «Գաղտնիք Ղարաբաղի» (առաջաբանը եւ գրաբարից աշխարհաբար թարգմանությունը՝ Մ. Բարխուդարյանի) գրքին հետեւեց Թիֆլիսում հրատարակվող «Արծագանք»-ի 1886թ. համարներում հաջորդիվ լույս տեսնող Բաֆֆու համանուն «Գաղտնիք Ղարաբաղի» պատասխան մատենախոսությունը: Մամուլում հրատարակվող թեր եւ դեմ կարծիքներին, անդրադարձներին, հոդվածներին զուգահեռ հրապարակի վրա երեւաց 26-ամյա մեկնաբան-պատմաբան Լեոյի «Վէ՞պ, թէ պատմութիւն» քննավերլուծականը, որը լույս ընծայեց Շուշիի Հայոց Հոգեւոր Տեսչության տպարանը՝ 1887թ.:

Ինչպես առանձնադիտել ենք, «Գաղտնիք»-ի շուրջ տրված մեկնություններից առավելությամբ պարբերական մամուլում հրատարակվել են միմիայն բացասական կարծիքները, տարբեր բնույթի ու ժանրի գրախոսությունները, հրապարակումները: Դրանցից է Լեոյի «Վէ՞պ թէ պատմութիւն» քննախոսականը:

Առաջին հայացքից ու աշխատանքին կցված բնաբանից մի բան պարզ է. 26-ամյա երիտասարդ մեկնաբանը «Գաղտնիք Ղարաբաղի»-ի թարգմանիչ Մ. Բարխուդարյանին համարելով վերոդիտված աշխատության հեղինակը՝ ծաղրելի է գտնում նրա՝ այսպես ասած, նաեւ ընտրած վերնագիրը՝ «Գաղտնիք Ղարաբաղի»: Այսպիսով, նրան անուղղելի պարծենկոտ համարելով... Բնաբանը Ա. Մ. Գարագաշյանի «Քննական պատմություն»-ից է քաղված: Ահավասիկ. «Վնասակար միանգամայն ծաղրելի է նաև զգուելի պարծենկոտութեամբ պատմութիւնը փծուն գովեստներով փայլուն երեւցուցանել ջանալ:

Չիք ինչ որ այնպէս նուաստացնէ դիւցազնական գործոց անգամ բուն յարգը՝ ինչպէս սին եւ պարծուկ վերադիրներ» (Հայ. եր. 2):

Խայծն արդեն գցված է. միամիտ ընթերցողը, անշուշտ, կարող է հակվել բացասական կարծիքի, եթե գրքի ու գրականության, ճշմարիտ խոսքի ու, ընդհանրապես, քննադատության ու նրա պաշտոնի, դերի մասին գաղափար չունի, չգիտի՝ ինչ է կատարվում մամուլի օրգաններում..., երբ են դրանք լինում անաչառ եւ աչառու, ինչպես են ստեղծվում կարծիք ու չափանիշ, այս կամ այլ տիպի երկը գնահատելու մասնագիտական չափանիշ...

Անշուշտ, եթե «Գաղտնիք»-ը պարունակում է նաեւ հետաքրքիր պատմություններ հետաքրքիր պատմական անձնավորությունների, մելիքական տների, մելիքների քաջագործությունների, հերոսների սխրանքների մասին, ապա դա էլ զայրացրել է թե՛ Ռաֆֆուն, թե՛ Լեոյին. մի կողմից հարցապնդել են՝ պատասխանելով, թե պատմական ցուցված այդպիսի իրադարձություններ, դեմքեր չեն եղել, մյուս կողմից՝ թե որտեղից են վերցված այդ պատմությունները, այդ փաստերը եւ այլն, եւ այլն:

Այսպիսով, Լեոն յուր գրքի վերնագրի տակ՝ փակագծերում, հղում է կատարել՝ նշելով, այսպես ասած, «Ղարաբաղի անցեալը Ապրես Բէկնազարեանի գրչի տակ» խորագիրը:

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արժեքավոր հատորներ լրացնող Լեոն «Վէ՞պ թէ պատմութիւն»-ում զարմանալի ոչ ճիշտ մեկնություններ է անում Արցախ աշխարհի մասին (գուցե երիտասարդ տարի՞քն է, կամ այլ երեւույթի պատճառը այդպես արտահայտվելու)...

Ահավասիկ. «Հին Արցախը, կամ Փոքր Սիւնիքը մեր ազգային պատմութեան էջ մի փոքրիկ անկիւն ունի գրաւած: Ամենահին ժամանակներից այդ նահանգը չի ներկայացրել մի որևէ տեղողական պատմական անցքի հանդիսարան... Արցախը չի տուել մի մեծագործ իշխան, կամ մի քաջարի զօրագունդ, որ կարողանար մի մեծ համբաւ հանել: Նա չունի իր յատուկ պատմութիւնը...

Մեր պատմութեան թողած այդ պակասութիւնը լցուցանել ցանկացող մարդը ակամայ դիմում է ենթադրութիւններին...»[1]:

Անշուշտ, սխալվում է Լեոն:

Մեծ Հայքի արքայապետության վերացումից հետո Արցախ եւ Ուտիք նահանգները կոչվում էին նաեւ Արեւելք, Հայոց Արեւելից կողմանք:

Պատմական Ադախ-Արցախը (սեպագիր արձանագրություններում՝ «Ադախունի» Վանի կամ Արարատյան թագավորության գահակալների կողմից, ըստ նրանց թողած սեպագրությունների՝ մ.թ.ա. VIII դարում իրենց ձեռնարկած արշավանքների ընթացքում յուրյանց թագավորությանն են միացրել...

Գահակալներից անդրանիկը՝ Արգիշտի Ա-ի որդի Սարդուր Բ-ն (գահակալել է մ.թ.ա. 764-735թթ.) յուր հասած երկիրը անվանում է Ադախ-Ուրտեխ ու այն միացնում յուր թագավորությանը...

Ռուսա Ա-ն (735-714թթ. մ.թ.ա.)՝ Սարդուր Բ-ի որդին, նույնպես հիշատակում է Սեւանից արեւելք ընկած երկրի՝ Ադախի մասին:

---

[1] Լէօ, Վէ՞պ թէ պատմութիւն, Շուշի, Տպարան Հայոց Հոգեւոր Տեսչութեան, 1887 (այսուհետ՝ Լէօ), էջ 3-4:

Նշանավոր Աշխարհացույցյան մեկնություններում եւս Արցախը կա, իբրև «տասներորդ աշխարհ Արցախ, որ երի նորա (Սիւնիքի) կայ մետասաներորդ աշխարհ՝ Փայտակարան, համանուն քաղաքով, որ առ եզերբն Կասպից ծովուն, ի մուտս Երասխայ, երկոտասաներորդ աշխարհ՝ Ուտեացուց, որ առ Աղուանիւք և Կուր գետով...»[2] :

«Աշխարհացոյցը» ստեղծվել է Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո, ուրեմն այն ժամանակից էլ Ադախ-Արցախը եղել է Մեծ Հայքի թագավորության կազմում:

Թե՛ Արգիշտի Ա-ն, թե՛ Սարդուր Բ-ն, թե՛ Ռուսան իրենց արձանագրություններում նշում են նաեւ Էտիունի-Օտենայի մասին, վերջինս ներկայացնում է միջնադարյան Ուտիքը, որը միացվել էր Վանի թագավորությանը նրա գահակալների միջոցով:

Ըստ սեպագիր արձանագրության, Սարդուրը՝ Ռուսայի որդին, իրեն է ենթարկել Արդախու երկիրը հարեւան երեք երկրների հետ ու կառուցել Թեյշեբա քաղաքը[3]:

Ռուս գիտնական-ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին առաջինը հայտարարել է, թե Արդախ-Ադախունին հենց ինքը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքն է[4], այսինքն՝ Արցախական աշխարհը:

Մ.թ. առաջին դարում մեծ գիտնական Ստրաբոնը, որն ուսումնասիրել էր Մեծ Հայքի թագավորության լեզուն, հայտնում է, որ այնտեղ բոլորը խոսում են մեկ լեզվով. դա հայերենն է[5]:

Ըստ Ստրաբոնի, Ուտիքը կոչված է Օտենա կամ Շակաշեն, Արցախը՝ Օրխիստինա: Այն Մեծ Հայքի հյուսիսային նահանգն էր, իսկ Օրխիստինա-Արցախը հիմնական նահանգներից: Այն պատերազմների ընթացքում հանում էր մեծաքանակ այրուձի[6]:

Արցախ եւ Ուտիք մարզերը Մեծ Հայքի սահմանների մեջ ընդգրկելու փաստը հաստատում են նաեւ Պտղոմեոսը (մ. թ. II դար), Դիոն Կասիոսը (մ.թ. III դար), Ստեփանոս Բյուզանդացին (մ. թ. IV-V դարեր) եւ ուրիշներ:

Պատմական վավերագրերի փաստումով պատմաբան Բ. Ուլուբաբյանը նշում է. «Արցախ-Ուտիք հայաշխարհը հնագույն ժամանակներից մինչև Մեծ

---

[2] Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 106:
[3] Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 329:
[4] Пиотровский Б.Б., Ванское царство, М., 1954, стр. 92:
[5] Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ. I, « 4, 5:
[6] Տե՛ս նույն տեղում, « 4, 5 եւ այլն:

Հայքի Արշակունյաց թագավորության բարձումը, որին էլ հետևել է մարզպանության շրջանը, գտնվել է Հայոց թագավորության կազմում և բաժանել է նրա ճակատագիրը...»[7]:

Ճիշտ է, մեկ-մեկ այս կամ այլ նախարարական տոհմ (Սյունիքի, Տարոնի, Վասպուրականի եւ այլն) ապստամբել ու անջատվել է Հայոց թագավորությունից, սակայն իսկույն միացվել է հիմնական մարմնին...

Ուրեմն, Լեոն ճիշտ չի մեկնում եւ գնահատում Արցախ աշխարհի պատմական ու քաղաքական նկարագիրը:

Նախ, նա եղել է թե Մեծ Հայքի թագավորության եւ թե՛ Վանի Հայկական թագավորության մի մասը եւ կիսել նրանց ճակատագիրը: Երկրորդ՝ նա ունեցել է թե՛ նշանավոր քաղաք հնագույն ժամանակներից եւ թե՛ որպես զինավառ այրուձի, մասնակցել շատ պատերազմների:

Վաչե եւ Վաչագան Առանշահիկները մի՞թե հզոր մշակութային շարժում չեն ձեռնարկել, Համամ Արեւելցի թագավորը՝ նույնպես...

Հայոց բուն թագավորություններում Արցախն ուներ կռվող այրուձի, կառուցված էին քաղաքներ ու կային հրաշագործ գործիչներ, ուներ ինքնատիպ մշակութային կյանք:

Եթե ամբողջ Հայաստանը 5-րդ դարում՝ 451թ., Ավարայրի ճակատամարտում ամբողջությամբ կախված էր օտարներից՝ Բյուզանդիայից եւ Պարսկաստանից, ապա Արցախն անկախ քաղաքական վիճակում էր գտնվում, ու նրա արքա-հովանավորները՝ Վաչեն, Վաչագանը, Համամը հզոր, աշխարհաշեն տիրակալներ էին ու հանճարեղ մտահղացումներ էին իրագործելի դարձնում, ապա այս փաստերը խոսում են ոչ Լեոյի մտահանգումների օգտին:

Լեոն, հետեւելով Փ. Բուզանդի, Մ. Խորենացու, Եղիշեի հաղորդումներին (երկրորդներնք Լեոյի միտքը), նշում է. «Ամենահին ժամանակներից այդ նահանգը (Արցախական աշխարհն ի նկատի ունի) չի ներկայացրել մի որևէ տևողական պատմական անցքի հանդիսարան, և եթէ մտցրել է իր անունը պատմութեան մէջ, դրանով պարտական է նրան, որ ինքն էլ մի հայաբնակ երկիր է եղել (ուրեմն՝ ոչ Մեծ Հայքի միասնական թագավորության եւ ոչ Վանի հայկական թագավորության, ապա՝ ոչ Արշակունյաց հարստության կազմի մեջ, որը պատմականորեն սխալ է - Զ. Ա.-Բ.) և երբեմն յիշեցրել է տուել իր անունը իր հսկայ լեռներով, իր թանձր ծմակներով: Արցախը չի տուել մի մեծագործ

[7] Ուլուբաբյան Բ., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Ե., «Տիգրան Մեծ» հր., 1998, էջ 8:

իշխան, կամ մի քաջարի զօրագունդ, որ կարողանար մի մեծ համբաւ հանել: Նա չունի իր յատուկ պատմութիւնը»[8]:

Սակայն, ինչպես վերը նշեցինք, պատմական աղբյուրներն (Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի Ե., 1963, Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, Пиотровский Б.Б., Ванское царство, М., 1954, Ստրաբոն, Աշխարհագրություն, Գիրք XI, գլ. I, « 4, 5...) այլ փաստեր են վկայում:

Նա՝ Արցախը, ունեցել է եւ յուր քաղաքները՝ Թեյշեբան, որը կառուցել է Սարդուր Բ-ն, հասնելով Ուրտեխինի-Արցախունի-Արդախ, Փայտակարանը՝ ըստ Աշխարհացույցի, եւ ինչպես Ստրաբոնն է վկայում, Օրխիստինա-Արցախը... որ պատերազմի ժամանակ հանում էր մեծաքանակ այրուձի[9]:

Պարսկաստանը 451թ. Ավարայրի ճակատամարտից հետո անկախ մնացած Արցախին քանիցս ցանկանում էր ճանկել, բայց... նրա փորձերն ապարդյուն են անցնում... Գործում էին Վաչէ, Վաչագան արքաները...

Արցախ գաղտագողի խուժած պարսկական զորքն ընկնելով քակարդ՝ միանգամից գետնի տակն է անցնում, կարծես չի էլ եղել: Դա Արցախի կառավարողների զինվորական հզոր արվեստի փաստելիությունն է մեկնում...

Լեոն գտնում է, որ քանզի որեւէ աղբյուր չկար Արցախի պատմության վերաբերյալ, ուստի նրա մասին խոսելուց պետք է ենթադրություններ անել: Նա հակված է փաստելու, թե «Արցախը հայ ազգին չի տուել մի գիտնական կրօնաւոր, մի պատմաբան, մի քաջամարտիկ հերոս, այլ և չի ունեցել մի շատ թէ քիչ նշանաւոր քաղաք...», որ «նա ներկայանում է իբրև մի կղզիացած երկիր»[10] եւ այլն, եւ այլն:

Հեղինակը կոշտ ու կոպիտ է համարում այդ երկիրն՝ ինչպես նրա բնությունը...

VII դարի պատմիչ Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մասին նշում է, որ «Աղուանից պատմութիւն չի նշանակում Արցախի պատմութիւն, որովհետև այդ դեռ ոչ բոլորովին ճանաչուած և հետազօտած հին տէրութեան մի մասն է կազմել Արցախը...», ապա հեղինակը յուր ենթադրությունները հասցնում է յուր համար տրամաբանական ավարտի՝ գտնելով, թե «Սկզբից մինչև մեզանից ոչ այնքան հեռու մի ժամանակ այդ երկիրը ծածկուած է անյայտութեան մէջ»[11]:

---

[8] Լեո, Վէ՞պ թէ պատմութիւն, էջ 3-4:
[9] Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ. I, « 4, 5:
[10] Լեո, Վէ՞պ թէ պատմութիւն, էջ 5-6:
[11] Նույն տեղում, էջ 4:

XIII դարի պատմիչ Կ. Գանձակեցու մասին էլ նշում է. «Կիրակոսի պատմածին նայած, XIII դարում թաթարների արշաւանքները աւերում են Աղուանից ամբողջ երկիրը և մասամբ Արցախը: Սրի և գերութեան մատնուած ժողովրդի մի մասը, ինչպէս և միշտ, կարողանում է ազատուիլ թագնուելով անմատչելի անտառներում:- Բայց յետոյ դարձեալ ամեն ինչ կուլ է գնում անթափանցելի անյայտութեան մէջ: Եւ այսպէս շարունակվում է մինչև անցեալ դարու սկիզբը, երբ Արցախում յանկարծ տեսնում ենք բացի ի վաղուց յայտնի Զալալեանների իշխանութիւնից նաև չորս ուրիշ իշխողներ, որոնք գործում են իբրև ժողովրդի պետեր, իբրև սեփականատէրեր»[12]:

**«Роман или история» Лео**

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, которые привлекли внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с грабара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела—ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Апреса "Тайна Карабаха".

Вокруг этой книги в периодической печати вышли отрицательные и положительные отзывы-оценки, рецензии, а также были опубликованы исследования (Раффи "Тайна Карабаха", Лео "Роман или история?"). В конечном итоге это исследование целиком было обесценено и отвергнуто.

Однако в ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование "Тайна Карабаха" содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха - объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале XIX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими повествовательными, фольклорными, языковыми, дипломатическими, политическими, художественно-литературными, этнографическими, управленческими, архивными, правовыми и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание. Он выполнен в русле современной критико-аналитической (герменевтической) и оценочной (аксиологической) новой системы.

---

[12] Նույն տեղում, էջ 5-6: